դատ արքայի և Հռիփսիմէ կոյսի պատկերներով։ խաչալամը «բարձրեալ կայր ի ծայրս ձողոյ և խաչ ոսկի կառուցեալ ի գլուխս Նորա։» Վանայ բէկը ցանկացաւ տեսնել այդ թափօրն և Ս. Աջը։ Երբ որ Վանայ վերին դռնով թափօրը բերդ մտաւ։ «ընդառաջ ել գոռոզն Մահմուտ բէկ ամենայն մեծամեծօք իւրովք։ տամբ և ամենայն ընտանեօքն։ և երկրպագութիւն մատուցանէին Սրբոյ Աջոյն և համբուրէին և զաղերս պատարագաց նուիրէին։ և մեծարեալ խիլայեաց զՀայրապետն և դարձոյց յօթեվանս իւր։» Գաւառի ժողովուրդն։ այս տեսնելով։ ամէն օր գալիս էին Ս. Աջին երկրպագութիւն մատուցանում և հայրապետին ողջունում ընծաներով և պատարագներով։ Երբ որ Վանից մեկնեցաւ կաթուղիկոսն և գնաց Ոստան։ Նորա յետևից և առջևից գնում էին մինչև հազար մարդ։ և նոցա բոլորի առջևից համարձակ տարուում էր Հայոց խաչալամը։ «ունելով զգլուխն զխաչ ոսկեփայլեալ լուսոյ նման։» Ոստանի այլազգի բնակիչներն։ Հայոց այդ ուրախութիւնը տեսնելով։ «ի խոր խոցեցան ընդ պայծառութիւն և համարձակութիւն հայրապետին։ որ ի գաւառէն Տարբերունւոյ մինչ ի քաղաքն Ոստան խաչալամով էր եկեալ՝ եպիսկոպոսօք և վարդապետօք և բազում կարգաւորօք և ժողովրդովք։» Ժողովուեցան նոքա քուրդ պարոնի մօտ և դաւադրութիւն կազմեցին Զաքարիայի դէմ։ Արթուն